«ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Երաժշտություն

Ղեկավար՝ Հռիփսիմե Խրիմյան

Մասնակից՝ Լուսաբեր Գալստյան

Թեմա՝ ՏՀՏ միջոցների դերը՝ որպես երաժշտություն առարկայի դասավանդման արդյունավետության մեթոդ

Երևան 2022

Բովանդակություն

1.Ներածություն……...…….. 2

2.Հետազոտության նպատակը և խնդիրները……...…. …... 3

3.ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը երաժշտամանկավարժական գործընթացում…….....……... 4

4.Եզրակացություն....…….....……13

5.Գրականության ցանկ…….…...…15

Ներածություն

Երաժշտությունը մայրենի լեզվի պես ազգի ինքնությունը և գոյությունը պահպանող միջոց է: Պատահական չէ, որ Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծված առաջին հայկական դպրոցներում «Մայրենի լեզու» և «Թվաբանություն» առարկաների կողքին, իր պատվավոր տեղն է զբաղեցրել «Երգ-երաժշտությունը»: Այսօր, գիտատեխնիկական հեղափոխության 21-րդ դարում երաժշտության դերն ու նշանակությունը՝ որպես մարդու հոգևոր, համակողմանի և ներդաշնակ զարգացման լավագույն միջոց, ավելի է մեծացել:

«Երաժշտություն» առարկան հիմնական դպրոցում արվեստի դասավանդման միջոց է, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության ժամանակակից, կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Երաժշտական կրթությունը և դաստիարակությունը սերտ կապի մեջ է գիտատեխնիկական ու սոցիալական առաջընթացի, ինչպես նաև կրթության աճող պահանջների հետ: Այն ունի կրթադաստիարակչական և պատմաճանաչողական նշանակություն, որը հնարավորություն է տալիս մեծացնել տարբեր ազգերի մշակութային հարաբերությունների շրջանակը՝ փոխադարձաբար հարստանալով և հարստացնելով ազգայինը, հատկապես, որ ժամանակակից տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը մեր օրերում հնարավորություն են տալիս ինտեգրվել արդի կրթական համակարգին՝ առավել բազմազան ու բազմակողմանի դարձնելով երաժշտական դաստիարակության և կրթության գործընթացը: Երաժշտության միջոցով հնարավոր է դառնում հումանիզացնել ուսուցման և դաստիարակության գործընթացը, որը մեր ժամանակի կարևոր և արդի պահանջներից մեկն է: Միշտ էլ այդ պահանջները եղել և շարունակում են մնալ արդիական:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Հետազոտության նպատակը. Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ ակտիվացնել հիմնական դպրոցի սովորողների երաժշտակրթական գործընթացը:

Հետազոտության խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել թեմայի հետ կապված համապատասխան գրականություն՝ նվիրված երաժշտական կրթության պատմության զարգացմանը և արդի խնդիրներին:
- Մանրամասն ուսումնասիրել Հայաստանում երաժշտական կրթության զարգացման ժամանակակից պահանջները:
- Կատարել առաջադեմ փորձի ուսումնասիրություն և ունենալ ստեղծագործական մոտեցում:
- Լայնորեն կիրառել տեսալսողական միջոցներ, խաղային և ժամանակակից մեթոդներ:

Հետազոտության նպատակին համապատասխան կիրառել ենք համալիր մեթոդներ՝ տեսական, գործնական, վերլուծական, խոսքային, ծանոթացման, զննման, համեմատման, ընդհանրացման և այլն:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՐԱԺՇՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայ հասարակության գործընթացների բարեփոխումների ժամանակակից փուլում ընդգրկում են ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլ նաև հասարակական ասպարեզները, որի կարևոր բաղադրամասն է հանդիսանում կրթությունը:

Կրթությունը հասարակական առաջընթացի և բարեփոխումների հիմնարար մեթոդն է: Կրթության հարցերով հետաքրքրվող յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ դպրոցը հասարակական առաջընթացի և բարեփոխումների առաջին և արդյունավետ միջոցն է :

XXI դարում կրթությունը դառնում է մարդկության գործունեության ամենակարևոր բնագավառներից մեկը և դիտվում որպես հասարակական և տնտեսական գործընթացների առաջատար գործոն: Ինչպես յուրաքանչյուր ժամանակաշրջան՝ XXI դարը նույնպես ձևավորում է կրթության և դաստիարակության իր պահանջները, մշակում նոր մոտեցումներ, նոր տեխնոլոգիաներ :

Հայաստանում երաժշտամանկավարժական կրթության համակարգի արդիականացումը, ուսման որակի բարձրացումը մեծ մասամբ կախված է ապագա ուսուցչի պատրաստվածության աստիճանից: Ապագա ուսուցիչը պետք է օժտված լինի զարգացած մտածողությամբ, բանիմացությամբ, նախաձեռնությամբ, երաժշտաստեղծագործական գործունեությունը օբյեկտիվ և բազմակողմանի իմաստավորելու, այդ գործունեությունն ինքնուրույն քննադատորեն իրականացնելու գնահատելու և ստեղծագործական վերափոխելու կարողությամբ :

Երաժշտության ուսուցման և դաստարակության աշխատանքներում կողմնորոշիչ է ոչ միայն երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը, այլև ուսուցման նոր մոտեցումների, տեխնոլոգիաների իմացությունը:

«Տեխնոլոգիա» բառն ունի հին հունական ծագում, բառացի թարգմանությամբ նշանակում է «գիտություն վարպետության մասին» (հունարեն «techne»՝ «արվեստ», վարպետություն, ունակություն և «logos»՝ «գիտություն, օրենք» բառերից):

«Տեխնոլոգիա» հասկացությունը կապված է արտադրական գործընթացի հետ և «արտադրանքի արտադրության ընթացքում հատկությունների, հումքի, ձևի, նյութի և կիսաֆաբրիկատի մշակման, պատրաստման, փոփոխության մեթոդների ամբողջություն է»: Տեխնոլոգիան ներառում է աշխատանքի ընթացակարգը, մեթոդները, հնարները, գործառնությունների և ընթացակարգերի հաջորդականությունը և սերտորեն կապված է կիրառվող միջոցների, սարքավորումների, գործիքների, օգտագործվող նյութերի հետ: Տեխնոլոգիական գարծառնությունների ամբողջությունը կազմում է տեխնոլոգիական գործընթացը: Ժամանակակից գիտությունը «տեխնոլոգիա» հասկացությունն օգտագործում է նաև մի շարք բնագավառներում, այդ թվում կրթության ոլորտում՝ որպես «ուսուցման, կառավարման տեխնոլոգիա» :

Հասկացության այսօրինակ մեկնաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

- Հասկացությունը մանկավարժություն է թափանցել տեխնիկական գիտություններից,
- Տեխնոլոգիան ինչ-որ բանի կատարելագործման, փոխակերպման միջոց է,
- Տեխնոլոգիան նախատեսում է գործողությունների հաջորդականություն:

Ինչպես տեսնում ենք, «տեխնոլոգիա» եզրույթի վերը նշված մեկնաբանություններն ընդհանուր են և կիրառվում են գիտության գրեթե բոլոր ասպարեզներում՝ բժշկություն, տեխնիկա, նաև՝ մանկավարժություն:

«Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության բազմաթիվ մեկնաբանությունները կապված են նրա հետ, որ այն կրթության համակարգ է ներմուծվել արտադրական գործընթացից: Մանկավարժական տեխնոլոգիաների

սկզբնաղբյուր կարելի է համարել Սարատովում ինժեներ Բ. Դուբովի ղեկավարությամբ 1955թ. մի խումբ գիտական-մեքենաներ նախագծողների ստեղծած «անթերի աշխատանք» համընդհանուր հայեցակարգը: Այս գաղափարը փոխանցվեց մանկավարժներին, ովքեր, օգտագործելով համապատասխան տեխնոլոգիաներ, կարող են ապահովել երաշխավորված ուսուցում:

«Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունն առաջին անգամ շրջանառվել է 20-րդ դարի 50-ական թվականներին՝ կապված կրթության համակարգում ուսուցման գործընթացում փոփոխությունների հետ, մասնավորապես պարզ ավանդական ուսուցումից անցում դեպի համատեղ *տեսալսողականի:*

«Տեխնոլոգիա» հասկացության մեկնաբանությունը ծավալուն ձևակերպվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից. «Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդման ամբողջ գործընթացի և գիտելիքի յուրացման, ստեղծման, կիրառման ու սահմանման համակարգված մեթոդ է, որը հաշվի է առնում տեխնիկական և մարդկային ռեսուրսներն ու դրանց փոխգործունեությունը՝ իր առջև խնդիր դնելով ուսուցման ձևերի օպտիմալացումը»: Այսպիսով՝ մանկավարժական տեխնոլոգիան ըմբռնվում է որպես ուսուցման միջոցների ամբողջություն, որը ներառում է ուսումնական նպատակներ, ուսուցման պայմանների ճշգրիտ նկարագրում և դրանց չափման չափանիշներ:

Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման հիմնական նպատակը աշակերտների ուսումնական գործունեության ակտիվացումն է: Ակտիվության սկզբունքը ենթադրում է, որ ուսումնական գործունեությունը պետք է ձևավորի ուսումնական դրդապատճառներ, գիտելիքների, կարողությունների յուրացման պահանջմունք, արդյունավետություն և համապատասխանություն սոցիալական նորմերին և սովորողների անհատական առանձնահատկություններին:

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները մեծ ազդեցություն ունեն հասարակության զարգացման ժամանակակից փուլում: ՏՀՏ-ները ներթափանցում են

մարդու գործունեության բոլոր ոլորտները՝ արտադրություն, գիտություն, կրթություն, մշակույթ, մարզաշխարհ և այլն, ապահովում են հասարակության մեջ տեղեկատվության տարածումը՝ ստեղծելով գլոբալ տեղեկատվական տարածություն: Ներկայումս՝ Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի բարեփոխումների փուլում, առկա է հարաճուն ներդրման առաջնահերթություն: ՏՀՏ-ների բազմագործառույթ կիրառումը բարձրացնում է այդ գործընթացի արդյունավետությունը, օգնում է ստեղծել համագործակցման մթնոլորտ, հետաքրքրություն դասի և ուսումնասիրվող նյութի նկատմամբ, ակտիվացնում է սովորողների իմացական գործունեությունը, զարգացնում է նրանց մշակութային հնարավորությունները, հնարավորություն է տալիս կազմակերպելու ինքնուրույն և խմբակային աշխատանք, դասի ժամանակ օգնում է բարելավել սովորողների գործնական կարողությունները և հմտությունները, թույլ է տալիս որոնել, մշակել և յուրացնել տարբեր աղբյուրների, ինչպես նաև համացանցի տեղեկատվությունը:

Մանկավարժական գործընթացում ՏՀՏ-ների ներդնմանն են անդրադարձել Վ. Գրիցենկոն, Ա. Երշովը, Գ. Կլեյմանը, Բ. Հանտերը, Ա. Կուզնեցովան և այլ հետազոտողներ:

ՏՀՏ-ների կիրառման արդյունավետությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

- Ուսումնական գործընթացում սովորողի ակտիվ մասնակցություն,
- ուսուցման գործընթացում սովորողի կողմից իր գործունեության վերլուծություն,
- ուսուցման գործընթացում հետադարձ կապի առկայություն,
- ուսումնասիրվող նյութի անընդհատ կրկնություն,

- սովորողի անհատական առանձնահատկությունների հաշվառում արտաքին պայմանների ընկալման տեսանկյունից՝ կախված նրա զգացողությունից և տրամադրությունից,
- ուսուցման գործընթացում գործողությունների հաստատուն հաջորդականության անհատականացում:

Այսպիսով, կարելի է ընդգծել ՏՀՏ-ի օգտագործման հիմնական ուղղությունները.

- տեսողական տեղեկատվություն /զննական, տեսողական նյութ/,
- ցուցադրական նյութ,
- խաղեր,
- սովորողների կարողությունների և հմտությունների վերահսկում,
- սովորողների ինքնուրույն որոնման, ստեղծագործական աշխատանք,
- ուսուցման գործընթացը դարձնել ստեղծագործական զննողական:

Արդի ժամանակաշրջանում երաժշտության դասավանդման մեջ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետ և ստեղծագործական միջոցներից է Power Point ծրագիրը: Ուսուցիչներն ու աշակերտներն այս ծրագրով իրականացնում են ներկայացումներ, որոնք օգնում են «Երաժշտություն» առարկան և արտադասարանական պարապմունքները դարձնել տեղեկատվական առումով հագեցած: Այս մեթոդիկան ենթադրում է մուլտիմեդիային պրոյեկտորի կիրառում, որը օգնում է սովորողներին խորացնել նախապես ստացած գիտելիքները: Ներկայացումն օգնում է ուսուցչին պատկերազարդ ներկայացնել դասավանդվող թեման, իսկ աշակերտին՝ հնարավորություն տալիս մտածելու և մասնակցելու դասի նյութի ստեղծմանը, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ: Power Point ծրագիրը թույլ չի տալիս ծանրաբեռնել սովորողների տեսադաշտը՝ նրանց ուշադրությունը կենտրոնացնելով ուսումնասիրվող նյութի վրա, միևնույն ժամանակ, օգտագործելով լիարժեք տեղեկատվություն, հնարավորություն է տալիս վերադառնալ դասաժամի ցանկացած պահին՝ ծախսելով նվազագույն ժամանակ:

«Երաժշտություն» առարկայի դասաժամերին կարելի է օգտագործել աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսին են զեկուցումները, խմբային և անհատական ուսումնական նախագծերը, ռեֆերատները: Իհարկե, էլեկտրոնային ռեսուրսները մեծաքանակ տեղեկատվություն են տրամադրում աշակերտներին վերոնշյալ աշխատանքներն իրականացնելիս, սակայն, Power Point ծրագրով ներկայացում (սահիկահանդես, սլայդ-շոու) պատրաստելիս այդ տեղեկատվությունը դեռևս բավարար չէ: Ներկայացման նախապատրաստական աշխատանքը ստեղծագործական գործընթաց է. դպրոցականը պետք է ուսումնահետազոտական աշխատանք կատարի, որոնի տեղեկատվական աղբյուրներ, ստացված նյութը մշակի, համակարգի, զատորոշի գլխավորը երկրորդականից, որը նրան զերծ կպահի ձևանմուշներից՝ աշխատանքը վերածելով անհատական, ստեղծագործական արդյունքի: Ներկայացման յուրաքանչյուր «էջ-սլայդ» պատրաստելիս սովորողը դառնում է համակարգչային նկարիչ (PP ներկայացումը պետք է լինի ճաշակով ձևավորված, արտացոլի հեղինակի ներքին վերաբերմունքը տվյալ թեմայի նկատմամբ): Power Point ծրագիրը հնարավորություն է տալիս դասաժամերին օգտագործել քարտեր, նկարներ, պատմական գործիչների դիմանկարներ, տեսահոլովակներ, աղյուսակներ:

Ուսուցչի՝ ուսուցողական նպատակով պատրաստած ներկայացման յուրաքանչյուր տարր պետք է մտածված և իմաստավորված լինի աշակերտի ընկալման տեսանկյունից: Ներկայացումներն արդյունավետ է կիրառել դասաժամի տարբեր փուլերին: Ուսուցանվող նյութի տեսողական ընկալումը թույլ է տալիս ավելի արագ և խոր ընկալել ուսումնասիրվող թեման :

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում

կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը։ Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները։ Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով։ Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց։

Պատկերավորությունն ուսուցման ամենահզոր գործիքներից է։ Ցանկացած առարկա, որ ներկայացվում է երեխային, պարզապես պատկերներ են, որոնք ինքն է ձևավորում տվյալ նյութի վերաբերյալ ։

Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների, գծագրերի, մեխանիզմների ներկայացումը, առարկաների գործածումը, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրումը։

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է։

Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով։ Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. *action- փոխազդեցություն* բառն է։ Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս։ Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ[*4*]։

Ուսումնական գործունեության այս տեսակը զարգացնում է սովորողի տրամաբանական մտածողությունը, ուսուցչին և աշակերտին հնարավորություն է տալիս դրսևորել ստեղծագործականություն, անհատականություն, խուսափել ձևական մոտեցումից: Ներկայացումը ցուցադրելիս սովորողը ձեռք է բերում հանդիսատեսի՝ համադասարանցիների, ծնորդների ուսուցիչների առջև ելույթ ունենալու, արտահայտվելու, ներկայացնելու, մեկնաբանելու փորձ, խոսքի մշակույթ, որը անձնային կարևոր հատկանիշ է: Չպետք է անտեսել նաև մրցակցության գործոնը, որը թույլ է տալիս բարձրացնել սովորողի ինքնագնահատականը, քանի որ համակարգչով աշխատելու կարողությունը ժամանակակից երիտասարդության ենթամշակութային բաղադրիչն է:

Այսպիսով՝ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է երաժշտության ուսուցման արդյունավետությունը՝ նպաստելով սովորողների ստեղծագործական, քննադատական մտածողության, համակարգչային հմտությունների, տեղեկատվության որոնման, մշակման և համակարգման կարողությունների զարգացմանը :

Եզրակացություն

Այսպիսով, երաժշտական կրթությունը հանդիսանալով անընդհատ զարգացող երաժշտական մշակույթի և մանկավարժական գիտության մաս, պետք է համապատասխանի երաժշտական ուսուցման ժամանակակից պահանջներին և երաժշտական գիտության զարգացման մակարդակին:

Մեր օրերում բավականին բարդ է սովորողների ուշադրությունը, ակտիվ գործունեությունը և ստեղծագործական ունակությունները կենտրոնացնել դասին, փորձելով վերջինս դարձնել հասանելի ու նպատակամետ և մենք կարծում ենք, որ ներկայացված տեխնոլոգիաները կնպաստեն այս գործընթացի ճիշտ կազմակերպմանը:

Մագիստրոսական ատենախոսության մեջ կատարված վերլուծությունները, մանկավարժական տեխնոլոգիաների ներկայացումը և խաղային գործունեության դերը կարևոր են սովորողների կրթական գործընթացում: Սովորողներն այսպես հաղորդակցվում են նորագույն տեխնոլոգիաներին, տիրապետում դրանց կիրառման հմտություններին: Դրանից զատ նմանօրինակ տեխնոլոգիաների կիրառումը երաժշտության դասին հետաքրքրություն է առաջացնում սովորողների մեջ, նրանք դառնում են նախաձեռնող, ստեղծագործող և բացահայտում իրենց կարողությունները:

Աշխատանքում ներկայացված մանկավարժական տեխնոլոգիաները և դրանց կիրառումը հիմնական դպրոցի երաժշտության դասին իրապես խթանիչ նշանակություն են ձեռք բերում դասը ավելի արդյունավետ կազմակերպելու համար և երեխաների կրթության և դաստիարակության գործընթացում խիստ նորարարական միտում ունեն: Ուստի պետք է օգտագործել այս հնարավորությունը ի նպաստ երեխայի, նրա կրթությունը ճիշտ և համակողմանի կազմակերպելու նպատակով:

Որդեգրելով նորագույն տեխնոլոգիաներ և ուսուցման նոր ուղիներ մենք ի կատար ենք ածում կրթական այն խնդիրները, որոնց լուծման արդյունքում կունենանք գրագետ և երաժշտապես զարգացած սերունդ:

Գրականության ցանկ

1. Աղայան Ղ. Երկրի ժողովածու. 4 հատորով: Հտ. 4.-Եր.: 1973:
2. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն: (Ուսումնական ձեռնարկ) / Յու.Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան; Խմբ.՝ Մ.Մ. Մանուկյան, Կ.Ա. Ավագյան. Երևան: Մանկավարժ, - 2005, 455 էջ:
3. Առաքելյան Ա. Կրթությունը և դաստիարակությունը Հին Հայաստանում, Հեռակա մանկ. ինստիտուտի տպարան, Երևան. 1945:
4. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ /ուսուցիչների համար/, ԿԱԻ-հրատ., Երևան -2004
5. Բաբայան Ս., Հայ մանկավարժութան պատմություն 19-20-րդ դարեր, Երևան, 2000:
6. Բաղդասարյան Մ. – Ռուս երաժշտության պատմություն /ուսումնական ձեռնարկ/ I- մաս, Երևան – 2010, 255 էջ:
7. Բարսամյան Ա. Հարությունյան Մ. - Հայ երաժշտության պատմություն /Հնագույն շրջանից մինչև մեր օրերը/, Երևան, 1996թ. էջ 20, 21, 56:
8. Գևորգյան Ա. <<Երաժշտամանկավարժական Տեխնոլոգիաներ>>, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան: Արտագերս, - 2015.
9. «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ, հաստատված է ՀՀ ԿԳ նախարարի 01.11.2007թ. N989-Ա/Ք հրաման
10. Զառա Տեր-Ղազարյան - Արևմտաեվրոպական երաժշտության պատմություն (Հին աշխարհից մինչև XIX դար), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-2014
11. Թահմիզյան Ն.Կ. - Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5-15-րդ դարերում, Եր. 1985, էջ 24,25:
12. Թահմիզյան Ն.Կ. - Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Եր. 1973, էջ 16:

13. Լալաբեկյան Ա.Բ. Ուսուցման գործընթացում գործնական խաղերի կառուցման և կիրառման ընդհանուր տեսական հիմունքները, Երևան. 2003., էջ – 102, 110
14. Լեոնտև Ա.Ն. <<Հոգեկանի զարգացման պրոբլեմները>>, <<Լույս>> հրատարակչություն, Երևան – 1968
15. Կոմենսկի Յ.Ա. Մեծ դիդակտիկա: Երևան, Հայպետուսմանկհրատ, 1962
16. Կոմիտաս վարդապետ-Ուսումնասիրութիւններ եվ հոդուածներ։ 2 գրքով։ գիրք 2-րդ, Եր. 2007, էջ 78,79։
17. Մախաչյան Հ.Մ., Մանուկյան Ալ.Ս., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, Երևան. 1997թ.
18. Մանուկյան Մ., Մկրտչյան Ա. Ինտերակտիվ մեթոդներ և խաղեր: Մանկավարժական միտք, - Եր.: Զանգակ-97, 2005.
19. Մելիքսեթյան Գ. Դպրոցականների բազմաձայն մտածողության ձևավորումը երաժշտության դասին, Երևան - 2007
20. Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., Ավետիսյան Վ.Ի. <<Երաժշտությունը 1-4–րդ դասարաններում>> ուսուցչի մեթոդական ձեռնարկ <<Զանգակ – 97>> հր. 2008թ
21. Յուզբաշյան Յու. Վ., Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան «Երաժշտությունը 5-րդ դասարանում»: Ուսուցչի մեթոդական ձեռնարկ. – Երևան: Զանգակ-97, 2010.
22. Յուզբաշյան Յու. Վ., Ա. Փահլևանյան, Վ. Ավետիսյան «Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում»: Ուսուցչի ձեռնարկ. - Երևան: Զանգակ-97, 2011.
23. Յուզբաշյան Յ.Վ., Փահլեվանյան Ա.Ա. Երաժշտություն: 6-րդ դաս. դասագիրք/Յ. Յուզբաշյան, Ա. Փահլեվանյան. – Եր.: Զանգակ, 2012. – 64 էջ:
24. Յուզբաշյան Յ. Վ., Փահլեվանյան Ա. Ա. Երաժշտություն: 7-րդ դաս. դասագիրք / Յ. Յուզբաշյան, Ա. Փահլեվանյան. – Եր.: «Զանգակ» հրատ., 2013. – 64 էջ:
25. Նալչաջյան Ա.Ա. Խաղ, խաղային գործունեություն: Հոգեբանական բառարան: - Երևան - Լույս, 1984.,
26. Նալչաջյան Ա.Ա. «Հոգեբանության հիմունքներ», 1997թ

27. Չալոյան Ծ. – Գեղագիտության պատմություն, Ամրոց Գրուպ, Երևան 2015
28. Վարդումյան Ս.Տ., Հարությունյան Լ., Ջաղինյան Մ., Վարելլա Գ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություններ, մեթոդներ, գնահատում/Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար/, 2-րդ լրամշակված հրատ. Երևան, - 2005.
29. Քուշնարյան Ք.Ս., Մուրադյան Մ.Հ., Գյոդակյան Գ.Շ. - Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան 1963, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն.